ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» նոյեմբերի 2017 թվական N 126-Ա

ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Վազգեն Սարգսյան փողոցի N 20 հասցեի անշարժ գույքը (այսուհետ՝ շինություն) անհատույց օգտագործման է տրամադրված «Լիլիթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

Նկատի ունենալով, որ շինության մի մասը չի օգտագործվում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով «Լիլիթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության տնօրենի գրությունները (համայնքապետարանում մուտքագրված համապատասխանաբար 2017 թվականի հոկտեմբերի 19-ին N 14221 և 2017 թվականի հոկտեմբերի 04-ին N 13638 թվագրություններով)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. «Լիլիթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Վազգեն Սարգսյան փողոցի N 20 հասցեում գտնվող շինության (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 08122016-08-0054) վկայականում նշված 08-001-0341-0063-001 կադաստրային ծածկագրի 1040.6 (մեկ հազար քառասուն ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունից առանձնացնել 99,57 (ինսունինն ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով տարածք և այն հետ վերցնել «Լիլիթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունից:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 99,57 (ինսունինն ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքը 10 (տասը) տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ տարածքի վերակառուցման և երիտասարդական կենտրոն ստեղծելու նպատակով:
3. «Լիլիթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ կնքված՝ գույքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին պայմանագրում կատարել համապատասխան փոփոխություններ և «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության հետ կնքել տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր՝ 10 տարի ժամկետով:

Կողմ (27) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Է. Մկրտչյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Խաչատրյան _____

Գ. Մաթևոսյան _____

Ա. Աղանյան _____

Ա. Մխիթարյան _____

Ս. Մարտիրոսյան _____

Հ. Եղիազարյան _____

Ա. Առաքելյան _____

Հ. Պողոսյան _____

Լ.Բարսեղյան _____

Ա. Գրիգորյան _____

Ա. Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«06» նոյեմբերի 2017 թ.